

ՎԵՀԱԺՈՂՈՎ՝ ԿԱՍՊԻՑ ԾՈՎՈՒ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՃՇԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԱՇԽԱՊԱՏ, 22 (ՌՈՅԹԸՐԸ).- Կասպից ծովը եկերող 5 երկիրներուն նախագահները Երեքշաբթի օր (այսօր) վեհաժողով մը պիտի գումարեն Թուրքմենիստանի մայրաքաղաքին մէջ, փորձելու համար լուծել տասնամեակէ ի վեր ծայր տուած բանավէճ մը՝ ծովը բաժնեկցելու ձեւին շուրջ:

Սակայն մինչ այն տուեալը, թէ Ռուսիոյ, Իրանի, Ղազախստանի, Ազրբայճանի եւ Թուրքմենիստանի նախագահները պատրաստ են ժողովի նստելու, դէպի առաջ քալլ մը կը նկատուի, այդ ժողովին ընթացքին նուաճում մը չ'ակնկալուիր:

Թուրքմենիստանի արտաքին գործոց նախարարութեան մէկ պաշտօնատարը յայտնած է, որ առաջին անգամ ըլլալով է, որ 5 նախագահներուն միջեւ վեհաժողով մը կը կայացուի: Ան աւելցուցած է, որ դժուար պիտի ըլլայ անմիջապէս լուծում մը գտնել, սակայն սակա առաջին քալլ մըն է:

Թուրքմենիստան մեկնելէ առաջ, Իրանի նախագահ Մոհամէտ Խաթեմի աւելի մեծ լաւատեսութեամբ արտայայտուած է:

«Իրական ժողով մըն է եւ կը յուսամ, որ 5 երկիրները արդար լուծումի մը պիտի յանգնին Կասպից ծովուն գծով», ըսած է ան օդակայանին մէջ:

Խորհրդային Միութեան 1991ի քայքայումէն ի վեր Կասպից ծովուն վիճակը անորոշ է: Մինչ այդ, 1970ին Խորհրդային Միութեան եւ Իրանի մէջ գոյացած համաձայնութիւն մը ճշգրտօրէն կը հաստատէր, թէ ո՞վ ի՞նչ ունի քարիւղի եւ բնական կազով հարուստ շուրջերուն մէջ:

Սակայն 3 նոր պետութիւններու ստեղծումը պարտադրած է, որ ծովուն շուրջերուն սեփականութիւնը 5 երկիրներուն միջեւ ճշդուի:

Ո՛չ ոք կը կասկածի, թէ Կասպից ծովը հսկայ պահեստներ ունի: Ազրբայճանի եւ Ղազախստանի պահանջած բաժիններուն մէջ արդէն իսկ միլիարտաւոր տոյարներու հասնող ներդրումներ կատարուած են:

Ղազախստանի մէջ Տնտեսական Համաշխարհային Ֆորումի վերջերս կայացած մէկ ժողովին, քարիւղի մարտի արեւմուտքի պատասխանատու մը յայտնած է, թէ 2010ին կը նախատեսուի, որ Կասպիցի շրջանը օրական շուրջ 3,8 միլիոն տակաո հում քարիւղ պիտի արտադրէ, ինչ որ կը համապատասխանէ Հիւսիսային Ճովուն մէջ ներկայիս արտադրուող քարիւղին շուրջ 60 առ հարիւրին:

Սակայն նկատի ունենալով, որ իւրաքանչիւր պետութիւն տարբեր տեսակէտ ունի ծովը սեփաբարձելու բաժնելու գծով, այդ հարցին լուծում մը գտնելը չափապանց դանդաղ կ'ընթանայ:

ՖՐԱՆՍԱՅԻ ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԼԸ ՓԵՆԻ ԴԵՄ ՄԻԱՑԵԱԼ ՃԱԿԱՏ ՄԸ ԿԱԶՄԵԼՈՒ ԿՈՉ

Ֆրանսայի նախագահական ընտրութեանց առաջին հանգրուանին ծայրայեղ աջակողմեան Ժան-Մարի Լը Փէնի յառաջացուած ցնցումէն ետք, երկրին դեկավարները՝ ձախէն աջ, երէկ անոր դէմ միացելու ճակատ մը կազմելու կոչ ուղղեցին, մինչ միջապահային գետնի վրայ, քաղաքական անձնատուրութիւններ եւ մեկնաբաններ կը դատապարտէին անոր ընտրութեանց մէջ արձանագրած յառաջիկա արդիւնքով մը, որ ամօթի պատճառով մը ստեղծած է բազմաթիւ ֆրանսացիներու մօտ, Եւրոպայի տարածքին ցնցումի ալիքներ դրկած եւ վերջ տուած ընկերվարական վարչապետ Լիոնէլ ժոսփէնի քաղաքական սասպարեպին, Լը Փէն յաջողած է Կիրակի օրուան ընտրութեանց պահպանողական նախագահ ժաբ Շիրաքէն ետք երկրորդ դիրքը սպահովել, երրորդ դիրքը հրելով ժոսփէնը:

Պարտութեան մատնուած աջակողմեան թեկնածուներ, որոնց կարգին՝ կեղոնի թեկնածու Ֆրանսուա Պայրո, յօրակցութիւն արտայայտած են Շիրաքի, որ առաջին հարցախոյզներու արդիւնքներուն համար ջախջախիչ յաղթանակ մը նախատեսած են Շիրաքի համար, որուն աջ թէ ձախ գերմրցակիցները զօրակցութիւն արտայայտած են անոր՝ պայքարելու համար Լը Փէնի ներկայացուցած սպառնալիքին դէմ:

արդիւնքներուն համաձայն, կրնայ թուել որ 80 առ հարիւրը սպահովել Մայիս 5ին: Ընտրութիւններէն ետք կատարուած յարաբարութեան մը մէջ, Շիրաք կոչ ուղղած է ֆրանսացիներուն, որ միանան Լը Փէնի դէմ, ըսելով. «Նժարի վրայ է մարդկութեան, անոր իրաւունքներուն եւ անոր արժանապատուութեան մասին մեր ունեցած գաղափարը»: Քուէներու 99,11 առ Շար-ը՝ էջ 10

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

● ՆԻԻ ՏԵԼՀԻ.- Առաջին 7 հոգի սպանուեցան եւ 70 ուրիշներ վիրաւորուեցան Նի Տելիիի մէջ ծագած հրդեհի մը պատճառով, որուն ընթացքին քանդուեցան աւելի քան հազար բնակարաններ, յայտնեց ոստիկանութիւնը: Հրդեհը հակակշիռի տակ առնուած է, սակայն հազարաւոր հնդիկներ անպատասպար մնացած են:

● ՏՈՒՊՏ.- Արաբական Միացեալ Էմիրութիւններու մէջ ինչ աշխատուողներ սպանուեցան, երբ իրենց կառուցած մէկ շէնքին տանիքը փուլ եկաւ իրենց վրայ: Դեպքին պատճառով վիրաւորուեցան նաեւ ութ ուրիշներ:

● ՊՐԱԹԻՍՍՈՒՄ.- Խուլիկաններ Սյոլվաքիոյ մէջ քանդեցին հրեաներու հարիւրաւոր գերեզմաններ, ինչ որ շրջանի պաշտօնատարները մղեց ըսելու. «Ք. Աշխարհամարտէն ետք հրեաներու դէմ գործուած ամենազէջ արարքն է սակա»:

● ՄԱՍՐԻՏ.- Սպանիոյ ոստիկանութիւնը Քաթալոնիոյ ծովեկերքը նստու մը մէջ գրաւեց 2,5 թոն թմրեցուցիչ, յայտնեցին պաշտօնատարներ:

● ՉԵՐԿԱԿԱՅԻՆ ԿԱՆԵՆ ԶՈՐԱ ԱՆՁԵՐ՝ սպանացի մը եւ երեք մարդոց հետ:

● ՌԱՊՍԹ.- Հարաւային Մարքի մէջ պայքարող մը կորսնցուց իր հակակշիռը արագութեան պատճառով, ինչ որ պատճառեց ահմեծ արկած մը, որուն կոտ գացին 12 ճամբորդներ եւ վիրաւորուեցան 22 ուրիշներ:

● ՔՈՒԵՅԹ.- Քուէյթի Սալաֆ իսլամական խմբաւորումը կոչ ուղղեց Սեուտական Արաբիոյ, որպէսզի ապստարծուին արգելափակուած ցուցարարները, որոնց մէջ կը գտնուի նաեւ իսլամական կրօնաւոր մը:

Արգելափակեալները ձեռքակալուած են ի նպաստ պաղեստինցիներուն ցոյցի մը ընթացքին:

● ՊՐԻԻԲՈՒԼ.- Պելճիքայի մէջ սինակոկ մը փամփոշւներու տարափի մը տակ առնուած է անցեալ շաբաթավերջին: Այս յարձակումը մաս կը կազմէ Եւրոպայի մէջ հակահրեական յարձակումներու շարքին, Միջին Արեւելքի մէջ Իսրայէլի գործադրած վայրագութիւններուն իբրեւ արդիւնք:

ՄԱԿԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱՒԱՆՅՅ ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎԸ ԿԸ ՄԵՐԺԵ ԴԱՏԱՊԱՐՏԵԼ ԻՐԱՆԸ

ԺԸՆԵԻ, 22 (ՌՈՅԹԸՐԸ).- ՄԱԿի մարդկային իրաւանց յանձնաժողովը մերժեց Եւրոպական Միութեան եւ Միացեալ Նահանգներու կողմէ ներկայացուած պահանջ մը, որ կ'ուզէ դատապարտել Իրանի մէջ ենթադրաբար տեղի ունեցող մարդկային իրաւունքներու բռնաբարումը, ՄԱԿի մարդկային իրաւունքներու յանձնաժողովի որդեգրած որոշումը պատճառ պիտի դառնայ, որ 1984ին ի վեր առաջին անգամ ըլլալով Իրանի դէմ քննադատութիւն չուղղուի: Առաջին անգամ ըլլալով Թեհրան պիտի չդառնայ թիրախը մասնաւոր տեղեկագիրներու, որոնք կը պատրաստուին յանձնաժողովին կողմէ նշանակուած քննիչի մը կողմէ:

ՄԱԿի մարդկային իրաւունքներու յանձնաժողովը զօրավիզ կանգնեցաւ Իսլամական խորհրդածողովի Կազմակերպութեան կողին, որ կը պահանջէր մերժել բանաձեւ մը, որ Իրանի կը պարտադրէ վերջ տալ խոշտանգումին ու չարչարանքին, ինչպէս նաեւ՝ խօսքի ու արտայայտութեան պատուիրակը յարգել եւ վերջ տալ կրօնական խտրականութեան: Բանաձեւը ներկայացուած էր Ե. Միութեան եւ Միացեալ Նահանգներուն կողմէ: Բանաձեւին ճախողութիւնը դիւանագիտական հարուած մը կու տայ Ուաշինկթընի, որ ամէն տարի առաջնորդի դեռակատարութիւն կը ստանձնէ Իրանի դէմ որդեգրուելիք բանաձեւերուն վաւերացման մէջ: Բանաձեւը ճախողութեան մատնուեցաւ 19ի դէմ քսան քուէով: 14 երկիրներ ալ նախընտրեցին ձեռնպահ մնալ:

Եւրոպական Միութեան ընթացիկ նստաշրջանի նախագահ Սպանիոյ ներկայացուցիչը բանաձեւի առաջարկը ներկայացուցած էր, դիտել տալով, որ թէեւ դրական իրադարձութիւններ արձանագրուած են Իրանի մէջ, քայքայապէս մտահոգիչ երեւոյթներ տակաւին առկա են մարդկային իրաւունքներու բռնաբարումի պատճառ դառնալով: Իսլամական երկիրներ, Չինաստան եւ այլ պետութիւններ սակայն Ե. Միութիւնն ու Միացեալ Նահանգները ամբաստանեցին, դիտել տալով, որ անոնք բանաձեւը կը հետապնդեն քաղաքական դրդապատճառներէ մղուած:

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԷՏՔ Է ՊԱՏԱՍԽԱՆԷ ԵՐԻՏՐԱՍՏՐԱՆԵՐՈՒՆ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՒՆ

Կ'ԸՍԷ ԵՍԶՏԻ
ԹԵՀՐԱՆ, 22 (ՌՈՅԹԸՐԸ).- Քաղաքական եւ ընկերային բարեփոխութիւններու տարիններուն վրայ կուտակուած պահանջը պատճառ դարձած է, որ Իրանի ժողովուրդը արագօրէն շատ բան ակնկալէ նախագահ Մոհամէտ Խաթեմիի ղեկավարած բարեկարգչական շարժումէն, յայտնեց ընդդիմադիր ղեկավար մը:

Իպրահիմ Եպտի, որ Միացեալ Նահանգներէն Իրան վերադարձաւ Շաբաթ օր, կ'ամբաստանուի իսլամական 23ամեայ վարչակարգին դէմ դաւելու յանցանքով: Եպտի դիտել կու տայ, որ պետութիւնը պէտք է պատասխանէ երիտասարդութեան ժողովրդավարական փոփոխութիւններու պահանջներուն: Ան աւելցուց, որ եթէ իշխանութիւնները նկատի չունենան ժողովուրդին մտահոգութիւնները, ժողովուրդը իր կարգին փոփոխութիւն յառաջանող այլ միջոցներու մասին պիտի մտածէ՝ վտանգաւոր դարձնելով արդիւնքը:

Եպտի, որ Իրանի իսլամական առաջին կառավարութեան արտաքին գործոց նախարարն էր, ներկայիս կ'առաջնորդէ բարեկարգչական

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՕՐԵՐ
ԸՄՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՐ
ԸՍԷՊԻ ՊԵՏԱԿԱՆ ԸՄՍԱՍԱՐԱՆԻ
ՑՈՒՅԱՀԱՆԴԵՍ
«ՊԱՏԿԵՐՆԵՐ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՒ ԸՆԿԵՐԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵՆՆԸ»
Տեղի կ'ունենայ 20, 21, 22, 23 Ապրիլ 2002, ԸՄՍԱԳՈՐԾԱՐԱՐԱՆԻ ԿԵՂՈՐՈՄԱԿԱՆ ԳՐԱՊԱՐԱՆԻ ՍՐԱԿԻՆ մէջ:

ԼՕՒԻ ԵՐԶԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ԸԱՆԴԻՊՈՒՄ
ԲԱՆԱՍԵՂԾ
ԺԱԳ Ս. ՅԱԿՈՐԵԱՆԻ ՀԵՏ
Կազմակերպութեամբ՝
Լ.Օ. ԽԱԶԻ ԵՐԶԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
Տեղի կ'ունենայ Ընդգաբքի, 25 Ապրիլ 2002, կէսօրէ առաջ ժամը 10:00ին, ԼՕՒԻ «Արաքսի Պուղորձեան» ընկերաբժշկական կեդրոնին մէջ:
ԸՐԱԿԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ - ԸԵՆՈՍ
ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ
«WHAT IS SPRITUALITY»
Պիտի դասախօս՝
Ն. Ս. Օ. Տ. ԱՐԱՍ Ա. ՎԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
Տեղի կ'ունենայ Շաբաթ, 27 Ապրիլ 2002, երեկոյեան ժամը 6:30ին, ԸԵՆՈՍ կեդրոնատեղիին մէջ, կաթողիկոսարան, Անթիլիաս:

ՀԱՍԷՊ
Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀՈԳԵՀԱՆԳԻՍ
Չորեքշաբթի, 24 Ապրիլ 2002, առաւօտեան Ս. Ե. Անճախ պատարագ պիտի մատուցուի ԸՄՍԱԳՈՐԾԱՐԱՆԻ մէջ:
Յաւարտ Ս. պատարագի, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի մէկուկէ միլիոն ցահատակներու անձեռ յիշատակին:

ՈԳԵԿՈՉԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ
Կազմակերպութեամբ՝
ԸՄՍԱԳՈՐԾԱՐԱՆԻ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
Ովանաւորութեամբ՝
ՀԱՅ ԵՐԵՔ ՀՈԳԵԴՈՐ ՊԵՏԵՐՈՒ
Նախագահութեամբ՝
ԳԵՐՇ. Տ. ՍՈՒՐԵՆ ԱՐԸ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆԻ
(Առաջնորդ Ըայոց Բերիոյ թեմի)

Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 24 Ապրիլ 2002, երեկոյեան ժամը 9:00ին, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ:

ՄԻՋՅԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ՈԳԵԿՈՉԱԿԱՆ ՑՈՒՅԱՀԱՆԴԵՍ
Ովանաւորութեամբ՝
ՀԱՅ ԵՐԵՔ ՀՈԳԵԴՈՐ ՊԵՏԵՐՈՒ
Կազմակերպութեամբ՝
ԸԱՅ ԱԲԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԸՄՍԱՅՆԵՐ
Տեղի կ'ունենայ Ընդգաբքի, 25 Ապրիլ 2002, երեկոյեան ժամը 9:00ին, Ըայ Աւետարանական Ընճանուկ եկեղեցոյ մէջ:

ՀԱՍԷՊ
ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՈԳԵԿՈՉԱԿԱՆ ՀԱՒԱՔՆԵՐ
Ովանաւորութեամբ՝
ԳԵՐՇ. Տ. ՍՈՒՐԵՆ ԱՐԸ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆԻ
(Առաջնորդ Ըայոց Բերիոյ թեմի)

Տեղի կ'ունենայ այսօր՝ Երեքշաբթի, 23 Ապրիլ 2002, կէսօրու ժամը 12:00ին, ԸՄՍԱԳՈՐԾԱՐԱՆԻ մէջ եւ միութեանական բոլոր վարժարաններուն մէջ:

ՄՈՍԱՎԱՌՈՒԹԻՒՆ
Նախագահութեամբ՝
ԳԵՐՇ. Տ. ՍՈՒՐԵՆ ԱՐԸ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆԻ
(Առաջնորդ Ըայոց Բերիոյ թեմի)

Տեղի կ'ունենայ այսօր՝ Երեքշաբթի, 23 Ապրիլ 2002, երեկոյեան ժամը 9:00ին, Ս. Նահատակաց Յուշահամալիրին մէջ, Տեր Զօր:

ՈՒԽՏԱԳՆԱՅՑՈՒԹԻՒՆ
ԴԷՊԻ ՏԵՐ ԶՕՐ
Այս առիթով Տեր Զօրի Սրբոց Նահատակաց մատրան մէջ Ս. Ե. Անճախ պատարագ պիտի մատուցուի եւ պիտի պատգամէ՝
ԳԵՐՇ. Տ. ՍՈՒՐԵՆ ԱՐԸ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆԻ
(Առաջնորդ Ըայոց Բերիոյ թեմի)
Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 24 Ապրիլ 2002ին:

ԹԱՐԻՉ ՀԱԿԱՀԱՅ ՇԱՐԱԹԱԹԵՐԹԻ ՓԱԿՈՒՄ

Վերջերս, Թարիչի ընդհանուր դատարանի վճիռով դադարեցրած է իրանի Արեւելեան Ատրպատական նահանգի «Մամա Թարիչ» թերթին հրատարակումը: Շարաթաթերթը յանցաւոր նկատուած է ոչ հաստատեղեկութիւններ հրատարակելու, ազգամիջեան լարուածութիւն եւ պառակտում սերմանելու, իշխանութեան պատասխանատուները վարկաբեկելու եւ կրօնական սկզբունքները անարգելու համար: Թերթը կը պաշտպանէր թուրքերոյ եւ Ազգայնականի շահերը՝ ան յայտնի էր մանաւանդ իր հակահայ յօդուածներով: Դատական վճիռին համաձայն, թերթին արտօնատէրը նոյնպէս պիտի պատժուի «7 ամիս բանտարկութեամբ եւ մտրակի 74 հարուածով»՝ սրբութիւններ անարգած ըլլալուն համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄՏԱՀՈԳ՝ ԿՐԱՍՆՈՏԱՐԻ ԴԵՊՔԵՐՈՎ

18 Ապրիլին Հայաստանի նախագահի մամուլի բանբեր Վահէ Գարբիէլեան մամուլի ասուլիսի մը ընթացքին ըսած է, որ կրասնոտարի հայերուն ճակատագիրով մտահոգ՝ Հայաստանի իշխանութիւնները դիմած են Մոսկուային: «Կացութիւնը իրապէս մտահոգիչ է, եւ Հայաստանի իշխանութիւնները անով մտահոգուած են: Այդ մտահոգութիւնը դիւանագիտական խոզովակներով արդէն հասցուած է Ռուսիոյ իշխանութիւններուն», յայտնած է Վահէ Գարբիէլեան: Յայտնեց, որ կրասնոտարի մէջ ապօրինի արտադրութի ղէմ պայքարը վերջին շրջանին ազգամիջեան բարեկամի բնոյթ ստացած էր: Կրասնոտարի սլաւոնական դերեզմանտան մէջ պղծուած են 50է աւելի հայկական գերեզմաններ: Նշեց, որ նոյն օրը այս հարցին շուրջ արտաստանուած է նաեւ Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան՝ մասնաւորապէս նշելով հետեւեալը: «Մենք ուղղակի համոզուած ենք, որ Ռուսիոյ իշխանութիւններուն օգնութեամբ կարելի պիտի ըլլայ լուծել այս հարցը

ՆԱՐԵԿԱՑԻՒ ԱՐՁԱՆ

19 Ապրիլին Երեւանի Մալաթիա - Սերաստիա համայնքին մէջ բացուած կատարուեցաւ Գրիգոր Նարեկացիի պրոնզէ արձանին: Բացումն արարողութեան ներկայ էին Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեան, Երեւանի քաղաքապետ Ռոպէրթ Նազարեան, համայնքի ղեկավար Ադաւազ Գրիգորեան, ինչպէս նաեւ արձանին հեղինակ՝ քանդակագործ Սեթ Մեհրապետ: Բացումն հանդիսութեան ընթացքին խօսք առաւ վարչապետ Անդրանիկ Մարգարեան, որ շնորհակալութիւն յայտնեց քաղաքապետին, քանդակագործին եւ ինարարներուն՝ կոթողի կանգնեցման համար:

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՊՐԱՆՔ

Ըստ բեռնամաքսային յայտարարագիրներու, Յունուար - Փետրուար ամիսներուն մարդասիրական օգնութեան կարգով Հայաստան ներածուած է 16,417 թոն ապրանք, որուն արժեքը 2,3 միլիոն տոլար է: Անոր 85,3 առ հարիւրը կը կազմէ քիմիագիտութեան եւ անոր հետ կապուած արդիւնաբերութեան ճիւղերու արտադրանքը:

ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ՝ 26 ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐՈՒ

Հայ Օգնութեան Ֆոնտի (ՀՕՖ) գիտութեան եւ կրթութեան հայկական ազգային հիմնադրամին ծրագիրով այս տարի դրամաշնորհի դիմում ներկայացուցած 260 հայ գիտնականներու գիտական թեմաներէն, մասնագիտական փորձաքննութեան ենթարկուելէ ետք, վաւերացուած են 26ը: Ըստ ՀՕՖի Հայաստանի գրասենեակի գործադիր տնօրէն Սիմոն - Եզնիկ Բալեանի գիտութեան ընկերային եւ քերական մարզերը ներկայացնող 26 հայ մասնագէտները իրենց գիտական նիւթերուն հետագոտական աշխատանքները իրականացնելու համար պիտի ստանան հինգ հազարական տոլար: Նշեց, որ անցեալ տարի վերոյիշեալ ծրագիրով դրամաշնորհի դիմում ներկայացուցած 80 գիտական նիւթերէն վաւերացուած էին 22ը:

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԿԵԱՆՔ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՊԻ ՊՈՍԹՐԵՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ
3 Մայիսին Հայաստանի պաշտպանութեան նախարար եւ ազգային անվտանգութեան խորհուրդի քարտուղար Սերժ Սարգսեան «Պահպանել Հայաստանի Ապագան» նիւթով ելոյթ պիտի ունենայ ժողովրդական հաւաքի մը, որ տեղի պիտի ունենայ Ուտարթըրթումի (Մասաչուսեթս) Հայ Կրթական եւ Աշակուծային Կեդրոնին մէջ: Այս այցելութիւնը Հայաստանի պաշտպանութեան նախարարին Պոսթրենապոլիսէն անաւելնալու համար իրենց հարազատ ընկերակցութեան հետ իրենց կ'ուրանայ Հարվըրտ համալսարանին Մեյ ծովու անվտանգութեան ուսումնասիրութեան ծրագրի հրաւերով կազմակերպուած սեմինարի մը ծիրին մէջ: Այս սեմինարին պիտի մասնակցին նաեւ վրաստանի ու Մոլդաւիոյ պաշտպանութեան նախարարները:

Յիշեցնենք, որ Հայաստանի պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան վերջերս եղաւ Ուտարթըրթումի եւ Երեւանի ուսուցիչներու Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնըլտ Ռամսֆելտի հետ:

ՆԻՒ ԵՈՐՔԻ ՀՐԸԵՋՆԵՐՈՒ ՊՏԱՆԻՐԱՎՈՒԹԻՒՆԸ ԱՅՅԵԼԵՅ ԱՌԱՋՆՈՐԴ ԽԱՎԱԿ ՊԱՐԱՄԵԱՆԻ

Նիւ Եորքի հրէշնեբու պատուիրակութիւն մը այցելած է Արեւելեան Ամերիկայի թեմի առաջնորդ Նաթան Գարսիան: Պարամանի: Առաջնորդը հրաւիրած էր պատուիրակութիւնը, յատկապէս իր խոր յարգանքն ու գոհունակութիւնը յայտնելու համար անոնց կատարած անձնուրի արշարաններին՝ 11 Սեպտեմբերին Նիւ Եորքի երկնաքերներու դէմ կատարուած ահաբեկչական արարքին առիթով: Պատուիրակութեան մաս կը կազմէին ծագումով հայ հրէշնեբու Շոն Կէրբեան, Ալեք Պարոն, Ռէյմընտ Հորտեան, թովմաս Յովակիմ, Պարէլ Քափու, Րաֆֆի Քեպիլի, Ռոպերթ Մուրատեան, Ճորճ Մաճարեան եւ Հերբի Օննիկեան: Անոնք խօսք տւեցին յայտնեցին իրենց ունեցած փորձառութիւնը եւ ապրած ահաբեկչական արարքին առիթով:

ԻՆՉՈ՞Ւ ՄՏԱՀՈԳՈՒԻՒ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ՄՇԱԿՈՅԹՈՎ

Այս հարցին ընդհանրապէս կը խուսափինք, տարբեր պատճառներով: Օր մը պէտք է խօսիլ այդ մասին՝ վերաբերումներու յստակացման համար: Մնալով խորագրին պատասխանելու սահմանին մէջ, փորձենք պատասխանել՝ առանց ամբողջական ըլլալու յաւակնութեան:

Մեր պատմութեան հոլովոյթը մեզի պարտադրած է, որ աստիճանաբար զարգացնենք երկու գրական աշխարհաբար լեզուներ: Անոնք, երկուքն ալ, ճկուն են, շնորհալի, եթէ յարգուին անոնց կանոնները, շարահետութիւնը եւ մանաւանդ՝ եթէ չաղճատենք մեր բառային հարստութիւնը՝ հիւանդագին կապուումներով: Մեր ինքնութեան գանձն է մեր լեզուն, եւ մենք մեզ առաջնորդած ենք խորտակման, ամէն անգամ որ հեռացած ենք անիջ: Հակառակ պատմութեան վկայութեան, անմիջական հետաձուտ, մենք մեզ տարած ենք խորտակման եւ կը շարունակենք ընթանալ այդ ուղիով: Մեր քաղաքական եւ տնտեսական ղեկավարութիւնը մանաւանդ լեզուի պաշտպանութեամբ չի զբաղուիր, զայն կը համարէ հարողակցելու մեթոդական պարզ գործիք: Միմոն Ջաւահան կ'ըսէր, թէ այլ ժողովուրդներու մէջ քաղքեմի դասակարգը կ'առաջնորդէ ազգային ինքնապաշտպանութիւնը եւ ազատագրութիւնը, հայերու մէջ ան կ'արգելակէ: Արեւելահայերէնի ընթացքը, 20րդ դարուն եղած է տարբեր արեւմտահայերէնի ընթացքէն: Հայաստանի մէջ տիրող քաղաքական - գաղափարաբանական պայմանները կրնային աղճատել, բայց ժամանակ պէտք է իր հողին վրայ ժողովուրդի լեզուն անհետացրելու համար:

Արեւմտահայաստանի բռնագրաւումէն եւ ամառացումէն ետք, տարագիր գանձուածները իրենց հետ տարին իրենց լեզուն եւ ընդհանրապէս իրենց մշակոյթը: Առանց պետեան նեցուկի, տարտղնումի պայմաններուն մէջ, յանդիպեցան պահել լեզուն, զայն սորվեցնել յամառութեամբ, եւ այլ լեզունով ստեղծուած է նաեւ գրականութիւն: Միաժամանակ, այդ լեզունով մշակուած գրականութիւնը ժառանգելով, անոնք դրոշմուեցան միջնորդող մը, որ բռնագրաւուած Հայաստանէն է, յուշ դարձած գիւղը, քաղքը, ուխտագնացութեան վայնքը: Անցեալ մը, որուն յաւերժացման միտումը դարձաւ ազգային գաղափարախօսութեան քաղկացուցիչ մաս: Սփիւռքի առաջին սերունդը, նոր ծնողները եւ մանուկ հասակին հայրենի հողէն պոկուածները, Միամանթօ, Զարդարեան, Վարուժան, Մշոյ Գեղամ, Յակոբ Պարոնեան, Երուսիմ կարգալով հայու նկարագիր կազմեցին: Այդ գրականութեան գործը աստիճանաբար վերածուեցաւ քաղաքական միտքի, քանի որ անով կը փորձեցնէին նաեւ յափշտակուած հայրենիքի գաղափարը, հայրենիք, որուն տէր կը զգային իրենք՝ գիրքը: Հայրենասիրութիւնը եւ ազգային քաղաքականութիւնը անհող եւ անհորիզոն մտքի մարզանքներն էին: Այդ սերունդները բնական կերպով կ'ապրէին հայրենի գիւղ կամ քաղքը վերադառնալու ցանկութիւնը, կիրքը: Շատեր յաղոցեցան ապահովել շարունակականութիւնը, բայց ժամանակը եւ հեռուորութիւնները պարտադրեցին իրենց աւերը: Հայրենասիրական ճառին գուգահեռ, Սփիւռքի արտասայտութեան սկսան մաս կազմել բառեր, գորս մշեցին կամ սասունցին երբեք չէին գործածած, այլասերում, ձուլում, աւելի վերջ, մեր օրերուն, կէս հայ քառորդ հայ, երբեմն կը հասնինք հոն, ուր հայ իր ազգը կը դիտէ դիմացի մայրէն եւ կը դառնայ հայասէր:

Ներգաղթ - արտագաղթ ընկերաստեսական երեւոյթը, ըսենք՝ ակամայ, կ'ապակալունացնէ դասական Սփիւռքը: Արտագաղթողները, արեւելահայերէնով արտայայտուող եւ այդ լեզունով ստեղծուած մշակոյթով աւելի թրծուած, աւելի ամուր, դասական Սփիւռքին աստիճանաբար կ'ապարտարեն սակզ հոլովոյթ, մանաւանդ աշխարհագրական այն շրջաններուն մէջ, ուր գոյութիւն չունին մշակութային - կրթական ամուր կառոյցները, կամ ուր նորեր կը հասնին գանձուածային կերպով եւ կ'ապրին այնպէս, որ կարծէք Երեւանի մէջ թաղամասէն միւսը փոխադրուած են: Մինչեւ ե՞րբ: Հարց է: Բայց որոշ է, որ կամաւոր մեկնումը կ'ենթադրէ նաեւ խզում: Դասական Սփիւռքը գոյակողմները գիտէին եւ գիտեն, որ իրենք չեն ընտրած իրենց գոյակողմակը, այդ պարտադրուած է իրենց, ինչ որ կ'արթնցնէ իրաւունք հետապնդելու գիտակցութիւն, որ գումարուելով լեզուի եւ մշակոյթի վրայ՝ կը դառնայ պատնէշ ուժացման դէմ:

Այս տուեալներէն մեկնելով՝ կ'ուզեմ եզրակացնել, որ Սփիւռքի, դասական եւ հաւանորէն անոր վրայ գումարուող նոր Սփիւռքի, գոյատեւման հակառակ պարզակներ են ընդհանրապէս հայերէնի պաշտպանութիւնը, ի հարկէ, բայց մանաւանդ՝ արեւմտահայերէնի, անով մշակուած եւ մշակուելիք գրականութիւնը: Բարդ կացութիւն: Բարդ հարցերուն անմիջական եւ թեթեւամիտ գործնապաշտ լուծումներ փնտոել մեզ կ'առաջնորդէ փակուղի:

Փակուղի, որուն ցուցանակին վրայ կը դրենք... Ի դէպ, ի՞նչ պէտք է գրել:

3. ՊԱՆԵԱՆ

«ԱՉԳԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ» մէջ յրեւել ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը ուղարկեն հրատարակչին՝ ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ԲԱՏԱՄՈՒՆԸ ԲԱՍՏԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԹՈՒԿԱՆԸ առնուագ՝ օր մը առաջ, ՄԻՆՉԵՒ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄՆԱԿ 5:00: ՄԱՀԱՉԳԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահագը կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան առնուագ՝ օր մը հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ԸԱՅ ԴԱՏ «ՀԱՇՏԵՑՄԱՆ» ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ՈՒՐՈՒԱԿԱՆԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Թուրք - հայկական «հաշտեցման» յանձնախումբին ուղղակականը կրկին կը սաւառնի: Թրքական որոշ աղբիւրներ անցեալ շաբաթ յայտնեցին, թէ այս յանձնախումբը վերստին աշխատանքի պիտի սկսի՝ այս անգամ կազմի որոշ փոփոխութիւններով: Նոյն աղբիւրները նաեւ յայտնեցին, թէ յանձնախումբը որոշած է գործել աւելի խորհրդապահական պայմաններու տակ: Անցեալ տարուան Դեկտեմբեր 11ին յանձնախումբին հայ անդամներու հրատարակած լայրժողով յայտարարութեան առիթով գրած էինք, թէ անոնք պարզապէս առժամաբար կը զարգեցնեն իրենց մասնակցութիւնը՝ յանձնախումբին պարզապէս աշխատանքներուն, եւ թէ կրնայ պատահիլ, որ ատեն մը ետք յանձնախումբը կրկին սկսի «առաջ ընթանալ»:

Փաստօրէն, ահաւասիկ յանձնախումբը որոշած է կրկին լծուիլ իր խանգարիչ աշխատանքին: Այս որոշումի կայացման մէջ դերակատար են նաեւ իշխեալ հայ անդամները, որոնք, ըստ տեղեկութիւններու, պատրաստակալութիւն յայտնած են աւելի ճկունութիւն ցուցաբերելու Յեղասպանութեան հարցին քննարկման գծով թրքական կողմի մտահոգութիւններուն նկատմամբ:

Յանձնախումբին հայ անդամներէն Անդրանիկ Միհրանեան լաւագոյն թարգմանը կը հանդիսանայ յանձնախումբին վերականգնանացման ի խնդիր անդամներուն փութկոտ մտայնութեան: Ըստ Միհրանեանի, «Հայ անդամները կարող են ոչինչ չձեռնարկել ու հեռանալ: Այսուհանդերձ, գործընթացը կը շարունակուի»: Հետեւաբար, որպէսզի «գործընթացը» առանց հայերու կշարունակուի, հայ անդամները, ըստ երեւոյթի, չաւանոր ճակատ կը մեկնին, որպէսզի առաջը առնեն թրքական գրոհին: Այլ առիթով մը, անցեալ յանուան ընթացքին, նոյն Միհրանեանը, ակնարկելով յանձնախումբին վերականգնանացման անհրաժեշտութեան, յայտնած էր, թէ Յեղասպանութեան ճանաչման գծով ժամանակը կը գործէր ի նպաստ թուրքոյ եւ ի վնաս հայութեան: Ըստ Միհրանեանի այս տրամաբանութեան, ընդունինք այն քիչը, որ ներկայիս կրնանք ստանալ թուրքայէն, այլապէս ժամանակի թաւալումով հետագային մեր ստանալիքը կրնայ շատ աւելի նուազ ըլլալ: Կրնայ պատահիլ, որ հայ անդամները անկեղծօրէն եւ լրջօրէն կը հաւատան իրենց առաքելութեան եւ յանձնախումբին դրական արդիւնքին: Եթէ այս է պարագան, անոնք պարզապէս համակուած են պարտուողական եւ զիջողական մտայնութեամբ, որ չի կրնար նպաստաւոր ըլլալ մեր ընդհանրական շահերուն: Կրնայ նաեւ պատահիլ, որ հայ անդամները արտաքին կեմբուր ծառայութեան մատակարարող գիտակց կամ անգիտակց ունենինք են: Իսկ եթէ այս է պարագան, անոնք միայն վնասակար տարրեր կրնան ըլլալ մեր քաղաքական աշխատանքներուն համար:

Փաստօրէն է, որ այս յանձնախումբը Միացեալ Նահանգներու պետական քարտուղարութեան օրհնութիւնը վայելող գործիք մըն է, որ կը միտի ծառայել թրքական շահերուն: Յանձնախումբի օրակարգին գլխաւորագոյն կէտն է՝ հակակշիռ բանեցնել հայկական պահանջատիրութեան վրայ, իսկ անոր հիմնական նպատակն է՝ չփոթ կացութիւն ստեղծել հայկական հարցերուն շուրջ եւ օրինականացնել թրքական անպաշտպանելի առարկութիւնները:

Հայութիւնը միասնականօրէն մերժած է ու պիտի մերժէ այս յանձնախումբը: Պէտք է ընդգծել այն իրողութիւնը, որ անցեալ Դեկտեմբերին այս յանձնախումբի աշխատանքներուն դադարեցումը կը պարտինք մեր ժողովուրդին հաւաքական կամքին: Ներկայիս, ի տես այս յանձնախումբը վերականգնանացնելու ճիգին, Հայաստանի կառավարութիւնը պէտք է խնայէ համայն հայութեան մէջ անցեալ տարուան վերջին հինգ ամիսներուն իշխեալ յանձնախումբին ստեղծած քաղաքական տագնապը: Իր երկդիմի կեցուածքով հայրենի իշխանութիւնը անցեալ տարի աւելի բարդացուց այս յանձնախումբը ձախողութեան մատնելու մեր գործը: Հիմա ճիշդ ժամանակն է, որ մեր կառավարութիւնը պարզ եւ մեկին յայտարարէ իր վերջորոշումը՝ այս յանձնախումբին քաղաքական յարատեւութեան նկատմամբ:

Հայ - թուրք յարաբերութիւններու զարգացումը անհրաժեշտ ընդհանուր մըն է հայրենի քաղաքական ուղղութիւնը մշակողներուն ու գործադրողներուն համար: Հայրենի իշխանութիւնները ազատ են որդեգրելու իրենց համար յարմար նկատուող ուղղութիւնները եւ միջոցները, որոնք կ'առաջնորդեն թուրքոյ եւ հայկական պահանջատիրութեան մարզերուն: Սակայն հայրենի կառավարութեան համար անթոյլատրելի է այդ մարզերուն նկատմամբ անտարբերութեան, կրաւորականութեան կամ երկդիմի կեցուածքի ցուցաբերումը, որ կրնայ վտանգաւոր հետեւանքներ պատճառել մեր ընդհանրական շահերուն: Ուստի, մեր կառավարութիւնը ստիպուած է վարքագծային եւ ուղղութեամբ յայտնաբերել որոշում կայացնելու «հաշտեցման» յանձնախումբը կողմնորոշող նախաձեռնութեան նկատմամբ:

Վերոյիշեալ վարքագծային եւ ուղղութեամբ անհրաժեշտութեան գուցահեռ, Հայաստանի կառավարութիւնը կրկին կ'արգելուած է իր ուղղութիւնը յստակացնելու իշխեալ յանձնախումբին նկատմամբ, որովհետեւ, իր իսկ որոշումով, Հայ Դատը Հայաստանի արտաքին քաղաքականութեան օրակարգի հիմնական կէտերէն մէկը կը հանդիսանայ: Հայաստանի կառավարութիւնէն ակնկալուածը պարզապէս քաղաքական յստակ դիրքորոշում մըն է, աներկապ թեր կամ դէմ կեցուածք մը «հաշտեցման» յանձնախումբին նկատմամբ: Այլապէս, անցեալ տարուան նման, հայ ժողովուրդը, իր բոլոր հատուածներով ու կազմակերպութիւններով, սակայն առանց իր օրինաւոր կառավարութեան կրկին պիտի ստիպուի քաղաքական սուղ գին վճարել՝ նշեալ յանձնախումբին աւերիչ գործը կանխելու համար:

ՍԵՂՈ ՊՈՅԱՆԵԱՆ

«ՀԱՅ ԴԱՏ»Ի ԷՋԸ 24 ԱՊՐԻԼԻՆ

Այսօրուան փոխարին «Եայ Դատ»ի էջը լոյս կը տեսնէ վաղը՝ 24 Ապրիլին:

ՄԵՐՉԱՒՈՐ ԱՐԵՒԵԼԵՔԻ ՀԱՅ ՄԵՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄԻ ՄԻՈՒԹԻՒՆ

ԱՊՐԻԼԵԱՆ ՅՈՒՇԱՏՈՒ ՄԻԱՅԵԱԼ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Չորեքշաբթի, 24 Ապրիլ 2002, կէսօրէ առաջ ժամը 10:00ին, Եայ Աւետարանական Առաջին Եկեղեցւոյ մէջ, «Մեքսիք» փողոց, Պէյրուք:

Պատգամաբեր՝ **ՎԵՐ. ԺԻՐԱՅՐ ՍՈՂՈՒՄԵԱՆ**

Գործադիր ԱՆՕՐԵՒ Ամերիկայի Եայ Աւետարանչական Ընկերակցութեան

Հաւատացեալ ժողովուրդը կը հրաւիրուի մերկայ ըլլալու սոյն պաշտամունքին՝ ոգեկոչելու համար մեր բիւրաւոր ցահատակներուն յիշատակը:

Միջազգային Քաղաքական Կեանք

40 ՏԱՐԻՆԵՐ ԵՏՔ՝ ՄԻԱՑԵԱԼ ԿԻՊՐՈՍՄԸ ԿՐՆԱՅ ՄՕՏ ՕՐԷՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԴԱՌՆԱԼ

Մինչ աշխարհի ուղարկությունը կեղծանցած է ահաբեկչության դեմ Միացեալ Նահանգներու պատերազմին վրայ, շատ քիչ ուղարկություն կը դարձուի կիպրոսի երկարատեւ տագնապին հաւանական լուծման: Կիպրոսի հարցը մանրամասն մըն է ազգային աւելի մեծ տագնապի մը, որ տարածուած է Եւրոպայի եւ Ասիոյ մեծ մասին մէջ:

2002ի սկիզբէն ի վեր թուրք կիպրացի ղեկավար Ռաուֆ Տենքթաշ եւ իր յոյն պաշտօնակիցը՝ Կիպրոսի նախագահ Կլաֆթոս Քլերիտէս շարքով 3 անգամ, առաւօտեան, լուսարձակներէ հետեւ կը տեսակցին եւ կը բանակցին կծկուող բրիտանական պետութեան կիպրոսէն քաշուելէն ետք (1960) սկսած ազգային տագնապին վերջ տալու համար: Մեծագոյն իրազդործումը արձանագրուեցաւ անցեալ տարի, երբ Տենքթաշ համաձայնեցաւ տեսնուիլ Քլերիտէսի հետ՝ հարցը լուծելու համար:

Տարի մը առաջ Տենքթաշ խուսափած էր ՄԱԿի հովանաւորած «մերձեցման» բանակցութիւններէն՝ պահանջելով «Հիւսիսային Կիպրոսի թրքական հանրապետութեան» միջազգային ճանաչումը, նախքան դէմ յանդիման բանակցութիւններու սկսիլը: Տենքթաշի այդ կեցուածքը առաջին անգամը չէր, որ պաղ շուր կը թափէր Կիպրոսի հարցը լուծելու ՄԱԿի ջանքերուն վրայ:

Թուրք կիպրացիներու ղեկավար Տենքթաշ աւելի քան 40 տարիէ ի վեր հերոսի ճանաչում կը վայելէ թուրքերոյ մէջ, ուր ան կը նկատուի թուրք կիպրացիներու փրկարարը կողմէ մէջ, ուր յոյները չորս անգամով կը գերազանցեն թուրքերը:

Երբ Տենքթաշ Նոյեմբեր 2000ին քաշուեցաւ ՄԱԿի վարած բանակցութիւններէն, ան կը վայելէր թուրքերոյ վարչապետ Պիւլէնիս Էնելիթի եւ ազգեցիկ բանակին հովանաւորութիւնը:

Բացի այն իրողութենէն, որ ներկայիս թուրքիա Եւրոպական Միութեան անդամակցութեան թեկնածու մըն է, այս մէկը Կիպրոսի երկարատեւ տագնապին մէջ սովորական բան մը կրնայ եղած ըլլալ: Երբ Տենքթաշ վերջին անգամ «ոչ» ըսաւ, թուրքերոյ մէջ ձայներ «բաւական է» ըսին: Մամուլը, առեւտրական պատասխանատուներ եւ, առաջին անգամ ըլլալով, քաղաքական անձնաւորութիւններ գնդացի, թէ կիպրոսի անդամ չարքը արգելք կը դնէր հասնելու ղեկավար Արեւմուտք ընդարձակուելու թուրքերոյ ռազմավարական աւելի մեծ շահերուն: Անոնք ի վերջոյ անդրադարձան, որ Եւրոպական Միութեան անդամակցութեան ճամբան կ'անցնի կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիայէն:

2001ի Դեկտեմբերին, Եւրոպական Միութեան կիպրոսի մերձեցումով, Տենքթաշ եւ թուրքերոյ իր զորակիցները գոտուր ընտրութեան մը առջեւ գտնուեցան: Կամ քաղաքական լուծուի մը իրենց յոյսը պէտք է կտրէին եւ արտօնէին, որ Կիպրոս առանց հիւսիսի թրքական մէկ երրորդ բաժնիին անդամակցի Եւրոպական Միութեան, կամ ալ համաձայնութեան մը պէտք է գային յոյն կիպրացիներուն հետ՝ նախքան Կիպրոսը ձեռք տալը: Խաղաքարտերու նուազումով, Տենքթաշ փոխեց իր ընթացքը՝ իր համամտութիւնը յայտնելով այժմու բանակցութիւններուն:

Սակայն մեծ արգելքներ կը մնան տակաւին: Հիւսիսի հողերը պէտք է վերադարձնել յունական կողմին: Երկու կողմերուն կալուածներու պահանջները պէտք է լուծուին: Ապահովական միջոցառումներ պէտք է որդեգրուին եւ Միացեալ Կիպրոսի համար նոր կառավարութիւն մը պէտք է հաստատուի:

Այժմ լաւատեսութեան որոշ հիմք մը կայ: Թէ՛ Տենքթաշ եւ թէ՛ Քլերիտէս կ'անդադառնան, որ այս մէկը իրենց վերջին փորձը պիտի ըլլայ: Այս յարգելի ղեկավարները, մէկը 78, միւսը՝ 83 տարեկան, աւելի քան չորս տասնամեակ այս գործին մէջ եղած են: Անոնցմէ ոչ մէկը հորիզոնին վրայ կը տեսնէ ոեւէ մէկը, որ կրնայ իր տեղը առնել: Յարկը սերունդը պիտի չզրկուի ժամանակաշրջան մը, երբ յոյներն ու թուրքերը իրեն դրացիներ խաղաղութեամբ ապրած են միասին: Աւելի՛ն. եթէ այս տարի համաձայնութիւն մը չգոյանայ, Կիպրոսը ձեռք պիտի բրթայ եւ անոր բաժանումը հաւանական է, որ վերջնական դառնայ: Եթէ այդ մէկը պատահի, կողմին հիւսիսային մէկ երրորդը, որ ինքնաբար չէ, պիտի ուզէ միանալ թուրքերոյ՝ իրականացնելով էճեկիթի միացումի սպառնալիքը եւ վտանգելով Եւրոպական Միութեան անդամակցութեան թուրքերոյ տենչերը:

Եթէ Տենքթաշ եւ Քլերիտէս լուրջ են երկու կողմերուն հիմնական շահերը պաշտպանող Միացեալ Կիպրոսի մը նկատմամբ, այդ մէկը ներկայիս կրնայ պատահիլ: Իսկ եթէ թուրքեր եւ յոյներ կրնան համբարաբար ապրիլ Կիպրոսի մէջ, այդ մէկը կրնայ աշխարհին համար աւելի մեծ տագնապներու խաղաղութեան նախընթացք ըլլալ: Ներկայ բանակցութիւններուն բեմը պատրաստելէ ետք, Միացեալ Նահանգներ եւ ուրիշներ պէտք է ստեղծեն կանգնիւն եւ լուրջայն երկու կողմերը քաջալերեն՝ համաձայնութեան մը հասնելու:

ԱԼՅՐԵՏ ՄՈՍԸՍ
«ԻնթերնէթըՆԸԼ ԷՆՐԸԼՏ ԹՐԻՊՈՒՆ»

ՀԱՄԲԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՅԵՆ
HAMPICK SASSOUNIAN
CSP - L.A.C. B - 5 - 131 44750
60-TH ST. WEST LANCASTER,
CA, 93536 — USA

ՎԵՆԵՉՈՒԵԼԼԱՅԻ ՏԱԳՆԱՊ

ՉԱՒԵՍ ԲԱՍԵՑԱՒ ՊՈՒՇԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Գոյութիւն ունին ձորը Պուշի երկու վարդապետութիւններ: Երկրորդը եւ աւելի հանրածանօթը կ'առնչուի ահաբեկչութեան: Անոնք, որոնք ահաբեկչութեան ապաստան կու տան կամ զօրավիգ կը կանգնին անոր, ենթակալ են ամբարիկեան յարձակումներու: Այս իրողութիւնը կողմիկ կըրպով ամփոփուած է Միացեալ Նահանգներու նախագահին ազդու ճառին մէջ. «Կամ՝ մեզի հետ էք եւ կամ՝ ահաբեկչներուն»:

Բայց գոյութիւն ունի ձորը Պուշի վարդապետութեան նախատիպ մը, որուն վրայ հիմնուած է երկրորդը: Անիկ կապ ունի ուսմանիւթի հետ եւ կ'արտացոլայ Պուշի նախագահութեան սկզբնական հանգրուանը բնորոշող գործունէութեան մէջ, ինչպէս երկրորդուղի ջերմացման դէմ քայլեր առնող Քիոթիոյի համաձայնութեան իր ընդդիմութիւնը՝ մեկնած քարիւղի ճարտարութեան տիպի վրայ անոր ունենալիք ժխտական ազդեցութեանն է Ալյասթայի նման պահպանուած բնութիւն ունեցող շրջանի մը մէջ քարիւղի արտադրանքի աշխատանքները շարունակելու իր պնդումը:

Պուշի առաջին վարդապետութիւնը կարծիքի է ամփոփել հետեւեալ ձեւով. անոնք որոնք մեզի չեն հայթայթեր մեր պահանջած ուժանիւթը, մեզի դէմ են:

Երբեմն Պուշի երկու վարդապետութիւնները զիրար կ'ամբողջացնեն, ինչպէս՝ Աֆղանիստանի մէջ, ուր ամբարիկացի նախագահ «Քալիստա»ի ենթադրեալ ահաբեկչներու թաղերու հաւանական ընկերակցութիւնը ունեցող թաղերու հաւանական ընկերակցութիւնը զարկ էր տալու իր պայքարը օգտագործեց իբրեւ առիթ՝ կեղծորոնակ Ասիայի քարիւղի չեղարկման դաշտերուն մէջ եւ շուրջ զինուորական խարխիւներ հաստատելու:

Երբեմն երկու վարդապետութիւնները անհաշտ կերպով կը գոյակցին, ինչպէս նարտաքիչ գործոց արտադրութեան Քիոթիոյ Փաուլը կը գտնէ Միջին Արեւելքի մէջ: Հոն քարիւղ արտադրող երկիրները կը տատանուին Պուշի արտօններու, որ իրագործ է իրաքի քարիւղի հանքերը «բարեկամ ձեռքեր» ու մէջ ղնելու իր ծրագրերը (ահաբեկչութեան դէմ պայքարի պիտակին տակ), մինչեւ որ Ուաշինկթըն չսանձէ իր արբանեակ պետութիւնը՝ Իսրայէլը:

Այս պարագային արդիւնքը այն է, որ Պուշի փրկելու համար ուժանիւթի իր քաղաքականութիւնը, ինքզինք կը գտնէ իր հակահարեկչական դաժան քաղաքականութիւնը կապող իսրայէլը յանդիմանելու խայտառակ կացութեան մէջ: Սակայն Պուշի ուժանիւթի վարդապետութիւնը հազուադէպօրէն այդքան բացարձակ կերպով բացայայտուած էր, որքան 12 Ապրիլին: Այդօրն էր, որ զինուորական ընդդիմադիր ուժեր վար առին ժողովրդավար կերպով ընտրուած վե-

նեգուելլացի նախագահ Հուկո Չաւէսը եւ անոր տեղ իբրեւ ազգային դեկավար զետեղեցին ամբարիկացի քարիւղի նախկին գործարար մը:

Մինչ ոչ մէկ փաստացոյց կու տայ, որ Ուաշինկթըն կազմակերպած է պետական հարուածը, դժուար է երեւակայել, որ գայն ծրագրողները գործած չըլլան առանց Պուշի վարչակարգին օրհնութեան: Սպիտակ Տուներ ոչ միայն անմիջապէս զօրավիգ կանգնեցաւ պետական հարուածին, այլ նաեւ տարօրինակ տրամաբանութեամբ մը Չաւէսը ամբաստանեց անոր ձախուղութեան համար:

Պատճառը քարիւղն էր: Ժիշը է, որ Քուպայի Տիտէլ Քասթրոյին Ուժանիւթը ընկերակցութեան նեղացուցած էր Պուշը: Ան նոյնիսկ այցեցեց Սատտամ Հիւսէյնի: Բայց անոր իսկական յանցանքը այն էր, որ կը փորձէր իր հակակշիռին տակ պահել երկրին պետական քարիւղի զօրակար ընկերակցութիւնը՝ «Փեթրոլիոս տը Վենեզուելլա»ն: Այդ քայլով ան սպառնաց ամբարիկեան շահերուն:

«Փեթրոլիոս» երկար ժամանակ եղած է իշխանութեան մէջ իշխանութիւն: Ան կ'օգտագործէ իր բոլոր լծակները՝ աւելցնելու համար Միացեալ Նահանգներու ձախուղող քարիւղի արտադրութիւնը: Հետեւեալ քարիւղի ընկերակցութեան նախագահը Միացեալ Նահանգներու քարիւղի երրորդ մեծագոյն հայթայթիչն է: Միացեալ Նահանգներու մէջ քաղաքական մեծ խաղերու «Քալիստա»ի ենթադրեալ ահաբեկչներու թաղերու հաւանական ընկերակցութիւնը զարկ էր տալու իր պայքարը օգտագործեց իբրեւ առիթ՝ կեղծորոնակ Ասիայի քարիւղի չեղարկման դաշտերուն մէջ եւ շուրջ զինուորական խարխիւներ հաստատելու:

ՎԱՐԿԱՅ

ՀՈՒԿՕ ՉԱՒԷՍ՝ ԻՐ ՏԵՂԸ ԶԳԻՏՅՈՂ ԾԱՌԱՅ ՄԸ

Ուրկէ՞ գիտենք, թէ Հուկո Չաւէսի դէմ կազմակերպուած պետական հարուածին ետին կը կանգնի Սի. Այ. Էյ.ը: Ժիշը այնպէս, ինչպէս գիտենք, որ վաղը առտու արեւը պիտի ծագի: Միշտ այդպէս պատահած է եւ ոչ մէկ պատճառ կայ մտածելու, որ վաղը առտու տարբեր պիտի ըլլայ:

Նկատի ունենանք Չաւէսի «ոնիր»ները. - Աֆղանիստանի դէմ Միացեալ Նահանգներու յարձակումը «անբեկչութեան դէմ ահաբեկչութեամբ պայքար» որակելով՝ ան պահանջեց վերջ դնել «անմեղներու շարքին»: Ամերիկեան ուժակոծումներուն պատճառով մահացած երեխաներու լուսանկարներ բռնելով՝ ան ըսաւ, որ անոնց մահերը «ոչ մէկ արդարացում ունենին, ինչպէս որ Նիւ Երքի յարձակումները արդարացում չունենին»: Իբրեւ հակազդեցութիւն, Պուշի վարչամեքենան ժամանակաւոր կերպով տուճ կանցեց Վենեզուելլայի իր դեսպանը:

- Չաւէս մօտիկ բարեկամ է Ֆիտէլ Քասթրոյի եւ աճող գիներով քարիւղ կը ծախէ Քուպայի: - Անոր պաշտպանութեան նախարարը Վենեզուելլայի մէջ ամերիկեան մնայուն զօրքերէն պահանջեց հեռանալ Քարաքասի գիներական խարխիւներէն, յայտարարելով, որ անոնց ներկայութիւնը կ'արդարանար Պաղ պատերազմի



Չաւէսի զօրակցներ քարաքասի մէջ անիւներ կը հրկիզեն:

Չաւէսի համար ժամանակը անբարենդ պատ էր: 8 Ապրիլին իրաքը պաշարուած պաղեստինցիներուն զօրավիգ կանգնելու նպատակով, յայտարարեց 30 օրուան քարիւղի պոյքոթ մը: Հո՛ւմ քարիւղի գինը բարձրացաւ: Առաւել, ամերիկեան լատինամերիկեան այլ երկրներ ձախուղեցան իրաքեան պոյքոթէն չորս օր ետք, վենեզուելլական գինուորականութեան մէջ հատուածը վար առաւ Չաւէսը: Քարիւղի պետական ընկերութեան վարիչները եւ գործաւորները վերջ տուին գործադուլին: Զինուորականութեան կողմէ իշխանութեան եղած նոր նախագահը ջնջեց միջազգային քարիւղի ընկերութիւնները:

Կրակին վրայ իւղ թափելու համար Չաւէս պաշտօնազրկեց քարիւղի պետական ընկերութեան ղեկավարները: Կրակին վրայ իւղ թափելու համար Չաւէս պաշտօնազրկեց քարիւղի պետական ընկերութեան ղեկավարները: Կրակին վրայ իւղ թափելու համար Չաւէս պաշտօնազրկեց քարիւղի պետական ընկերութեան ղեկավարները:

Չաւէսի համար ժամանակը անբարենդ պատ էր: 8 Ապրիլին իրաքը պաշարուած պաղեստինցիներուն զօրավիգ կանգնելու նպատակով, յայտարարեց 30 օրուան քարիւղի պոյքոթ մը: Հո՛ւմ քարիւղի գինը բարձրացաւ: Առաւել, ամերիկեան լատինամերիկեան այլ երկրներ ձախուղեցան իրաքեան պոյքոթէն չորս օր ետք, վենեզուելլական գինուորականութեան մէջ հատուածը վար առաւ Չաւէսը: Քարիւղի պետական ընկերութեան վարիչները եւ գործաւորները վերջ տուին գործադուլին: Զինուորականութեան կողմէ իշխանութեան եղած նոր նախագահը ջնջեց միջազգային քարիւղի ընկերութիւնները:


Չաւէսի համար ժամանակը անբարենդ պատ էր: 8 Ապրիլին իրաքը պաշարուած պաղեստինցիներուն զօրավիգ կանգնելու նպատակով, յայտարարեց 30 օրուան քարիւղի պոյքոթ մը: Հո՛ւմ քարիւղի գինը բարձրացաւ: Առաւել, ամերիկեան լատինամերիկեան այլ երկրներ ձախուղեցան իրաքեան պոյքոթէն չորս օր ետք, վենեզուելլական գինուորականութեան մէջ հատուածը վար առաւ Չաւէսը: Քարիւղի պետական ընկերութեան վարիչները եւ գործաւորները վերջ տուին գործադուլին: Զինուորականութեան կողմէ իշխանութեան եղած նոր նախագահը ջնջեց միջազգային քարիւղի ընկերութիւնները:

Չաւէսի համար ժամանակը անբարենդ պատ էր: 8 Ապրիլին իրաքը պաշարուած պաղեստինցիներուն զօրավիգ կանգնելու նպատակով, յայտարարեց 30 օրուան քարիւղի պոյքոթ մը: Հո՛ւմ քարիւղի գինը բարձրացաւ: Առաւել, ամերիկեան լատինամերիկեան այլ երկրներ ձախուղեցան իրաքեան պոյքոթէն չորս օր ետք, վենեզուելլական գինուորականութեան մէջ հատուածը վար առաւ Չաւէսը: Քարիւղի պետական ընկերութեան վարիչները եւ գործաւորները վերջ տուին գործադուլին: Զինուորականութեան կողմէ իշխանութեան եղած նոր նախագահը ջնջեց միջազգային քարիւղի ընկերութիւնները:

Չաւէսի համար ժամանակը անբարենդ պատ էր: 8 Ապրիլին իրաքը պաշարուած պաղեստինցիներուն զօրավիգ կանգնելու նպատակով, յայտարարեց 30 օրուան քարիւղի պոյքոթ մը: Հո՛ւմ քարիւղի գինը բարձրացաւ: Առաւել, ամերիկեան լատինամերիկեան այլ երկրներ ձախուղեցան իրաքեան պոյքոթէն չորս օր ետք, վենեզուելլական գինուորականութեան մէջ հատուածը վար առաւ Չաւէսը: Քարիւղի պետական ընկերութեան վարիչները եւ գործաւորները վերջ տուին գործադուլին: Զինուորականութեան կողմէ իշխանութեան եղած նոր նախագահը ջնջեց միջազգային քարիւղի ընկերութիւնները:

ԹՈՍԱՆ ՈՒՍԸՔՈՍ

«Թորոնթօ Սթար»



Չաւէս իշխանութեան վերատիրանալէ ետք:

Չաւէսի համար ժամանակը անբարենդ պատ էր: 8 Ապրիլին իրաքը պաշարուած պաղեստինցիներուն զօրավիգ կանգնելու նպատակով, յայտարարեց 30 օրուան քարիւղի պոյքոթ մը: Հո՛ւմ քարիւղի գինը բարձրացաւ: Առաւել, ամերիկեան լատինամերիկեան այլ երկրներ ձախուղեցան իրաքեան պոյքոթէն չորս օր ետք, վենեզուելլական գինուորականութեան մէջ հատուածը վար առաւ Չաւէսը: Քարիւղի պետական ընկերութեան վարիչները եւ գործաւորները վերջ տուին գործադուլին: Զինուորականութեան կողմէ իշխանութեան եղած նոր նախագահը ջնջեց միջազգային քարիւղի ընկերութիւնները:

Չաւէսի համար ժամանակը անբարենդ պատ էր: 8 Ապրիլին իրաքը պաշարուած պաղեստինցիներուն զօրավիգ կանգնելու նպատակով, յայտարարեց 30 օրուան քարիւղի պոյքոթ մը: Հո՛ւմ քարիւղի գինը բարձրացաւ: Առաւել, ամերիկեան լատինամերիկեան այլ երկրներ ձախուղեցան իրաքեան պոյքոթէն չորս օր ետք, վենեզուելլական գինուորականութեան մէջ հատուածը վար առաւ Չաւէսը: Քարիւղի պետական ընկերութեան վարիչները եւ գործաւորները վերջ տուին գործադուլին: Զինուորականութեան կողմէ իշխանութեան եղած նոր նախագահը ջնջեց միջազգային քարիւղի ընկերութիւնները:

Չաւէսի համար ժամանակը անբարենդ պատ էր: 8 Ապրիլին իրաքը պաշարուած պաղեստինցիներուն զօրավիգ կանգնելու նպատակով, յայտարարեց 30 օրուան քարիւղի պոյքոթ մը: Հո՛ւմ քարիւղի գինը բարձրացաւ: Առաւել, ամերիկեան լատինամերիկեան այլ երկրներ ձախուղեցան իրաքեան պոյքոթէն չորս օր ետք, վենեզուելլական գինուորականութեան մէջ հատուածը վար առաւ Չաւէսը: Քարիւղի պետական ընկերութեան վարիչները եւ գործաւորները վերջ տուին գործադուլին: Զինուորականութեան կողմէ իշխանութեան եղած նոր նախագահը ջնջեց միջազգային քարիւղի ընկերութիւնները:

Չաւէսի համար ժամանակը անբարենդ պատ էր: 8 Ապրիլին իրաքը պաշարուած պաղեստինցիներուն զօրավիգ կանգնելու նպատակով, յայտարարեց 30 օրուան քարիւղի պոյքոթ մը: Հո՛ւմ քարիւղի գինը բարձրացաւ: Առաւել, ամերիկեան լատինամերիկեան այլ երկրներ ձախուղեցան իրաքեան պոյքոթէն չորս օր ետք, վենեզուելլական գինուորականութեան մէջ հատուածը վար առաւ Չաւէսը: Քարիւղի պետական ընկերութեան վարիչները եւ գործաւորները վերջ տուին գործադուլին: Զինուորականութեան կողմէ իշխանութեան եղած նոր նախագահը ջնջեց միջազգային քարիւղի ընկերութիւնները:

ՈՒՍԸՔՈՍ ՊԼԱՄ

«Քառնթըրփանչ» կայք

ԿԵՆՍՈՒՆՈՐՏԱՅԻՆ

ՋՈՒՐԻ ԾԱԳՆԱՊՆ ՈՒ ՈՐԱԿԸ՝ 21ՐԴ ԴԱՐՈՒ ՄԵԾԱԳՈՅՆ ՀԱՐՑԵՐԻՆ

Զուրբ եւ ոչ թէ քարիւղն է մեր կեանքին ամենն թանկագին հեղուկը: Անկէ կախեալ է երկրագունդին վրայ մեր կեանքը:

Եթէ աշխարհ քարիւղի եւ բրածոյ այլ վառելանիւթերու տազանայ դիմագրաւէ, կարելի է ուժանիւթի այլ աղբիւրներ օգտագործել: Եթէ աշխարհ մաքուր, ըմպելի ջուրն զրկուի, մարդկութիւնը կը դատապարտուի չքամալու:

Այսօր աւելի քան 6 միլիարդ բնակիչներ թեւակոխած են արդէն 21րդ դարը՝ առանց յաջողելու բաւարար եւ դիւրին ապահովուող մաքուր ջուր, ուտելիք եւ ուժանիւթ ապահովել իրենց: Աշխարհի տարածքին աւելի քան 1,1 միլիարդ մարդ ըմպելի ջուրի տազանայ կը դիմագրաւէ Երկրայիս: Շուրջ 2,4 միլիարդ մարդ, այսինքն՝ աշխարհի բնակչութեան 40 առ հարիւրը, տար-

րական առողջապահութեան համար անհրաժեշտ միջոցներ զուրկ է, եւ տարեկան 3,4 միլիոն մարդ ջուրի կապուած հիւանդութիւններու զոհ կ'երթայ:

Զուրի Կամաշխարհային Օրուան առիթով (Մարտ 22) ՄԱԿի Օղերեւութաբանական Կամաշխարհային Կազմակերպութեան ընդհանուր քարտուղար Կոտուին Օպասի յայտարարեց. «Զուրի տազանայ ու որակը 21րդ դարու մեծագոյն հարցերէն պիտի ըլլան, աւելցնելով, որ ջուրի տազանայ սնդղանիւթերու ապահովման մեծագոյն սպառնալիքն է»:

Նկատի ունենալով, որ ջուրի հարստութեան գծով շրջանային վեճերը թափ կը ստանան եւ մարդիկ անմիջական մեծ մարտահրաւերներ կը դիմագրաւեն, հարցը կարելի չէ անտեսել, կ'ըսեն քառասունները:

ՓՈՔՐԻԿ «ՏՈՊՐԱԿ»ՆԵՐ՝ ԶՈՒՐԻ ԶՏՈՒՄԻ ՀԱՄԱՐ



Զուրի գտումի շատ աման փոքրիկ «տոպրակ»ներ կրնան բարգաւաճման ընթացքի մէջ գտնուող աշխարհին մէջ կեանքներ փրկել:

Ժամանակի ընթացքին ինքնաբերաբար բնութեան կողմէ տարբադարձուող «տոպրակ»ները կը բաղկանան երկու մասէ: Անոր վարի մասը կը պարունակէ քիչ մը շաքար եւ կիսաբաժան մաշկ մը, որ ջուրին կ'արտօնէ իր մէջէն անցնի:

Եթէ «տոպրակ»ը գետեղուի աղտոտ, ցեխոտ ջուրի մէջ, միայն մաքուր ջուրն է, որ կ'անցնի կողմէ, իսկ աւելի մեծ մասնիկները, ինչպէս ժահրեր եւ մանրէներ, դուրս կը մնան:

Տոպրակը լեցուցելու համար 4 ժամանակ պէտք ունի:

Մինչ այդ «տոպրակ»ին վերի բաժինը կրնայ պարունակել չոր ցիւրեր, ինչպէս երեխաներու ճաշ՝ բուժիչ յատկութեամբ, ինչ որ կրնայ դիւրին խառնուիլ հեղուկ մը կազմելու համար, ջուրին վարի բաժինը մտնելէ ետք:

Փոքֆ. Անտրու Թոմքինգ եւ անոր խմբակը արդէն իսկ անցեալ տարի փորձարկած են այս տոպրակները Պանկլատի մէջ:

Ան կ'ըսէ, թէ «տոպրակ»ները կրնան օգտագործուիլ նաեւ ողողումներու պարագային, երբ ջուրները կրնան, օրինակ կոլուղիի աղտոտ ջուրերու խառնուիլ ու մարդոց մահի պահանջով:

Գիտնականները, ջուրի մարդի մասնագէտներ եւ կենսոլորտի պաշտպաններ տասնամեակներէ ի վեր կը գոչուցանեն, թէ ջուրի տազանայ մը կը սպասուի: Զգուշացում մը, զոր ընդհանրապէս անտեսած են կառավարութիւնները:

Տազանային պատճառը մասամբ բնականաբար արձանագրուող օդի ծայրայեղ պայմաններն ու ջուր շտապող շրջաններու ընդարձակումն ու կծկուիլն է: Մակայ մարդկային գործունէութիւնը հետզհետէ աւելի մեծ դերակատարութիւն ունեցած է ընդհանրապէս ջուրի տազանայի եւ լաւորակ ջուրի բաւարար համեմատութեան պակասում մէջ:

Բարեկամ մասին ի նպաստ գործող շրջանակներու մէջ չապակասած, մաքուր ջուր ունենալը հետզհետէ աւելի կը նկատուի իրրեւ մարդկային հիմնական իրաւունք մը: Բան մը, զոր կառավարութիւնները ստիպուած են ապահովելու:

Պարտաւեց՝ Ս. Ա. ՊՈՅԱՆԵԱՆ (Աղբիւրներ՝ «ՈՒՅԹԸՐՁ», «ԹԱՅՍ»)

Մարտի սկիզբը Մելիքուհի մէջ տեղի ունեցած կենսոլորտի խորհրդաժողովի մը ընթացքին աստարտիւրացի հետազոտող Կրէնըմ Զէրիս յայտնած է, թէ մաքուր ջուրի պակասը պիտի ըլլայ մեծագոյն հարցը, զոր աշխարհ պիտի դիմագրաւէ յառաջիկայ 50 տարիներուն, եւ թէ՛ կառավարութիւններն ու գործարար շրջանակները կը մերժեն դիմագրաւել այս մարտահրաւերը:

Կրէնըմ Զէրիս անգամով բազմապատկուած է 1900էն 1995, աւելի քան կրկնապատկելով բնակչութեան աճի համեմատութեան:

ՄԱԿի Մանրանիւթի եւ Երկրագործութեան Կազմակերպութեան փոխ ընդհանուր քարտուղար Լուիզ Ֆրեսոն նշեալ հանդիսութեան յայտնած է, թէ մինչեւ 2030 թուական ոռոգումի կարիքը ունեցող սննդանիւթերու արտադրութիւնը աւելի քան 80 առ հարիւրի աճ պէտք է արձանագրէ բարգաւաճման ընթացքի մէջ գտնուող երկիրներուն պահանջներուն գոհացում տալու համար, մինչ տրամադրելի ջուրը հազիւ 12 առ հարիւրի աճ պիտի ունենայ:

Ֆրեսոյի համաձայն, յառաջիկայ տարիներուն ընդհանրական մեծագոյն մարտահրաւերը պիտի ըլլայ ինչպէս յաւելնալ սննդանիւթ արտադրել նուազ ջուրով: Ան անհրաժեշտ նկատած է, որ երկրագործութիւնը աւելի մեծ արտադրողականութիւն ունենայ՝ նուազ ջուր օգտագործելով:

ՄԱԿի օդերեւութաբանութեան մարմինը կ'ըսէ, թէ երկրագործութիւնը ջուր սպառող մեծագոյն մարդն է, որ կը սպասուի աշխարհի տարածքին ընդհանուր գործածութեան 72 առ հարիւրը:

Ջուրին վրայ ճնշումները հետզհետէ աւելի թափ կը ստանան, մինչ բնակչութիւնը աճ կ'արձանագրէ բարգաւաճման ընթացքին մէջ գտնուող երկիրներուն մէջ, կ'ըսեն մասնագէտները:

Նախատեսութիւնը այն է, թէ ընդհանուր բնակչութեան թիւը ներկայ շուրջ 6 միլիարդէն 2020ին պիտի հասնի աւելի քան 8 միլիարդ:

Օպասի համաձայն, 2025էն սկսեալ աւելի քան 1 միլիարդ մարդ ջուրի տազանայ պիտի դիմագրաւէ մինչ միջազգային համայնքը ետ մնացած է աշխարհի տարածքին բաւարար սնունդը չստացողներուն թիւը մինչեւ 2015 կէսի՝ շուրջ 400 միլիոնի իջեցնելու իր թիրախն:

Մասնագէտները կ'ըսեն, թէ ոռոգումի եւ ճարտարաբանութեան մէջ ջուրի յաւելեալ պահանջը պատճառ դաժած է, որ աշխարհի տարածքին կարգ մը գետեր ծով չհասնին եւ բազմաթիւ վայրերու մէջ ստորերկրեայ ջուրի խաւերուն պահեստը նուազի:

Ջուրի հարցերու մասին կառավարութիւններու խորհրդատու, ընդհանրական Ջուրի Գործակցութեան Կազմակերպութեան գործադիր քարտուղար Նալիտ Մոհթաբադիան կը յայտնէ, որ աշխարհի բազմաթիւ վայրերու մէջ ջուրի հարստութեան տնօրինումը վատնումի համագոր է եւ անհրաժեշտ է գայն բարելաւել:

ԶՈՐԱՑՈՒՄԸ ԿԸ ՔԱՆԳԵ ԱԳԱՐԱԿՆԵՐՈՒ ԵՎ ԿՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎԱՅՐԻ ԵՎ ԿՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԿԵՆՏՐՈՒՆ

Ջուրի հարստութեան վրայ այլ ճնշում մըն է չորացումը, կը յայտնեն մասնագէտները:

Աղեքսանդրիոյ մէջ Մարտի կէսերուն կայացած խորհրդաժողովի մը ընթացքին անոնք յայտնած են, թէ չորացումը կը քանդէ ագարակներու արտադրութիւնները եւ աշխարհի բազմաթիւ վայրերու մէջ բուսական եւ անասնային կեանքի այլազանութիւնը, ճնշումը աւելի եւս բարձրացնելով՝ աւելի օգտակար ձեւով սննդանիւթ արտադրելու:

Չոր վայրերու մէջ Երկրագործութեան Մարդի Հետազոտութիւններու Կեդրոնի (ԻՔԱՐՏԱ) ընդհանուր քարտուղար Ատէլ Պելթաճի կը յայտնէ, որ աշխարհ կը շարունակէ «լաւ հող» կորսնցնել հովու եւ ջուրի պատճառով մաշումին, երկրագործական անյարմար սովորութիւններու, «բնական» բազմաթիւ շրջաններու քաղաքներու վերածուելու պատճառով: Այդ հողերը անապատի կը վերածուին, կ'ըսէ ան:

Բրիտանացի ծինարան Պրայըն Ճոնսոնի համաձայն, լայնածիր երկրագործութիւնը հողը կը մաշեցնէ հասցանկային համեմատութիւններով՝ ջուր պահելու անոր կարողութիւնը կը ճանաչուի:

Հողի մաշումը մեծ ազդեցութիւն ունի արտադրողականութեան վրայ, կ'ըսէ Ճոնսոն: Մուրիա գտնուող ԻՔԱՐՏԱյի ընդհանուր տնօրէնի համաձայն, երաշտը հուսմանքներու արտադրողականութիւնը սահմանափակող գլխաւոր պատճառներէն է ու անիկա բազմաթիւ համայնքներ աղքատութեան մէջ բանաւորութեան կը պահէ:

Անոր գնահատումով, մէկ միլիարդ մարդ կ'ապրի աշխարհի չոր շրջաններուն մէջ, որոնք ընդհանուր առմամբ կը տարածուին Կեդրոնական եւ Արեւմտեան Ասիային եւ Հիւսիսային Աֆրիկային, այսինքն՝ Ղազախստանէն Մալդիւրիանի:

Ճոնսոն խորհրդաժողովին յայտնած է, որ աշխարհի երկրագործական հողերը ծանր կերպով մաշում արձանագրած են, ինչ որ քանդած է անասուններու եւ բոյսերու բնական միջավայրը: «Աշխարհի տարածքին թռչուններու ամբողջ խումբը պաշարման տակ են», ըսած է ան:

Մասնագէտներու համաձայն, անապատացումը հողէն կը քաշէ ջուր եւ սնունդ, որոնք անհրաժեշտ են բոյսերու եւ անասուններու այլազանութիւնը պահպանելու համար:

ԿԱՆԱԶ ՔԱՂԱՔՆԵՐԸ ԱՅՆՔԱՆ ԱՆ ԿԱՆԱԶ ԶԵՆ

Ապրիլի սկիզբը դարձեալ Մելիքուհի մէջ կատարուած խորհրդաժողովի մը ընթացքին արձանագրուած է քաղաքներու ազդեցութեան հարցը բնական շրջապատերու վրայ, նկատի ունենալով, որ աշխարհի բնակչութեան աւելի քան 50 առ հարիւրը քաղաքներու մէջ կը բնակի:

Այդ ժողովին աւարտին աշխարհի տարածքէն շուրջ 40 մասնագէտներ կոչուող ճեմ կառավարութիւններու, որպէսզի հակաշիտի տակ առնեն քաղաքներու մէջ ջրաբեր գործածութիւնը՝ իրենք իրենց հոգացող քաղաքները:

Ասիկա կը նշանակէ, թէ անհրաժեշտ է ջուրը շատ աւելի մեծ համեմատութեամբ փոխել եւ դարձեալ գործածել գայն, փոխանակ ամբարտակներու կառուցման համար մեծ գումարներ ծախսելու, ըսած են անոնք:

Ասիկա նաեւ կը նշանակէ, որ բնակարանային նոր ծրագրերներու մէջ նկատի պէտք է առնուին անձրեւի ջուրերը հաւաքող ընդունարաններ, որպէսզի քաղաքացիները իրենց «տանիքին» ջուրը խմեն:

Միւս կողմէ, ըստ մասնագէտներու, բարձր շէնքերու կառուցման ընթացքին կարելի է լրջօրէն նկատի առնել կենսոլորտային յարմարաւէտ տպամաններու ապահովումը:

Ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, որ մարդոց արտադրողականութիւնը կրնայ 15 առ հարիւր կամ աւելի աճիլ՝ բնական լոյս, օդ եւ բնութեան այլ «հարստութիւններ» հայթայթելով անոնք:

ԱՄԲԱՐՏԱԿՆԵՐ ԲԱՆԱՎԵՃԵՐՈՒ ՆԻԹ

Ջուրի մասին ընդհանրական քննարկումներու ամէնէն վիճելի երեսներէն են ոռոգումը եւ ամբարտակներու կառուցումը, եւ անոնք հետզհետէ աւելի քննադատական աչքով է, որ կը դիտուին:

Ամբարտակներու հարցով զբաղող համաշխարհային յանձնախումբ մը անցեալ տարուան իր տեղեկագիրին մէջ եզրակացուց, թէ մինչ ամբարտակները իսկական շահեր հայթայթած են, վճարած գինը՝ ծախս, կենսոլորտի վրայ ազդեցութիւն եւ մարդոց տեղափոխութիւն, բազմաթիւ պարագաներու անընդունելի եւ յաճախ ոչ անհրաժեշտ եղած է:

Տեղեկագիրը նշեց, որ ջուրի, սննդանիւթի եւ ուժանիւթի կարիքներուն գոհացում տալու համար ամբարտակներու փոխարէն այլ ընտրանքներ «չատ աւելի կարելիութիւններ» կ'ընձեռեն:

Անուշ ջուրի հարստութեան մասնագէտներէն Փիթըր Կլայք կը շեշտէ, որ պէտք է վերատեսութեան ենթարկել ջուրի օգտագործման տնօրինումները: «Այլուս չենք ապրի ժամանակաշրջան մը կամ աշխարհի մը մէջ, ուր գետերուն վրայ անվերջանալիօրէն կարելի է ամբարտակներ կառուցել, ստորերկրեայ ջուրի խաւերէն անդադար ջուր քաշել, բնական շրջապատ մաշեցնել եւ աղքատացնել: Պէտք է կերտնանք ջուրի գործածութեան ձեւին վրայ: Հոն է, որ նոր ջուր պիտի գտնուի», կ'ըսէ ան:

ՄԻՆԻՈՆԱՒՈՐ ՄԱՐԳԻԿ ՎԱՐԱԿՈՒՄԸ ԶՈՒՐԻ ՎՏԱՆԳՆԵՐ ԿԸ ԳԻՄԱԳՐԱՒԵՆ

Առողջապահական տարրական միջոցառումներու պակասը յառաջիկայ տասնամեակին աշխարհի ամենէն աղքատ երեխաներէն 20 միլիոն գոհ պիտի խլէ, եթէ կառավարութիւնները անմիջական միջոցառումներու չդիմեն, կը գրէր բրիտանական «Թիրֆանտ» եւ «Ուոթըրէյթ» գործակալութեան մէկ տեղեկագիրը անցիկ ամիս:

Անիկա յայտնեց, որ բարգաւաճման ընթացքին մէջ գտնուող աշխարհի մեծ մասերուն մէջ առողջապահական տարրական միջոցներու պակասը բերրի հող մը կը հայթայթէ այլապէս կանխարգիլելի հիւանդութիւններու:

Ըստ տեղեկագիրին, ջուրի կապուած հիւանդութիւններէ տառապող մարդիկ «աշխարհի հիւանդանոցներու ամկոդներուն» կէսը կը գրաւեն, իսկ Զի-Նասուանի, Հնդկաստանի եւ Ինտոնեզիոյ մէջ փոքրամասնութիւններու պատճառով հիւանդութիւններու պատճառով մահերու համեմատութիւնը ՍիՏԱյի պատճառով մահերու կրկնապատկելի է:

«Թիրֆանտ»-ի պատասխանատուներէն Ճոն Կրիկ կ'ըսէ, թէ պետութիւնները անտեսած են աշխարհի ամենէն աղքատ մարդոց առողջապահական միջոցներ հայթայթելու հարցը, երբ թիրախները նշած են աղքատութեան ցուցանիշները:

«Սակայն, եթէ անոնք որոշած ըլլային տարեկան 15,7 միլիարդ տոլար ծախսել, այսինքն՝ նոյն գումարը, գործարարութեամբ կամ արտադրութեամբ շուկայի վրայ կարողութեամբ կարող էին աշխարհի տարածքին ջուրի կապուած հիւանդութիւնները կէսի պիտի իջնէին», կ'ըսէ ան:

ՏԱՐԵՂԱՐՁԻ ԼԱՒԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ VIDEOԻ ԿԱՍ ՇՈՒ ՎՐԱՅ VIDEO CLIPՆԵՐ ԱՆՁԻՆ ԱՆՈՒՆՈՎ ԵՎ ՄԱԿԱՆՈՒՆՈՎ Դիմել՝ ԱՐԱ ԲԵԷԷՃԵԱՆ ՀԱՍՏ. Հեռ. 01 / 261696, 03 / 250518

HAIGAZIAN UNIVERSITY @ THE CULTURAL HOUR Invites you to an illustrated lecture On Absurd Surrealism: From its Origins to Modern Times By DR. MOVSES HERGELIAN Thursday, April 25, 2002, 7 p.m. Haigazian University Auditorium - Kantari An exhibition of absurd surrealist painters will follow the lecture.

